

ՄԱՅՐՆՆԻՔ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՎԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ս. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Եղիշեի, Խորենացու, Փարպեցու, Ստեփանոս Օրբելյանի և այլոց պատմական երկերը, բազմաթիվ վիճաբանական արձանագրություններ, կալվածագրեր, դատաստանագրեր, «Կանոնագիրք Հայոցը» և այլ աղբյուրներ¹ ու նրանց նվիրված հետազոտություններ² անվիճելիորեն հավաստում են, որ ավատական Հայաստանում հողի և այլ ստացվածքի նկատմամբ սեփականության իրավունքը հայտնի է եղել հայրենիք, պարզեական և գանձագին (արծաթագին, քսակագին) անուններով: Սպառի՝ չէ՝ արդյոք սեփականության իրավունքի առաջացման աղբյուրների այս թվարկումը: Մեզ թվում է, որ բավարար տվյալներ կան մտածելու, թե գոյություն է ունեցել և ցայսօր անմեկնելի է մնացել սեփականության իրավունքի ևս մի աղբյուր, որ հայտնի է եղել մայրենի անունով:

Նման ենթադրության հիմք են տալիս XVII—XVIII դդ. մեզ հասած մի քանի կալվածագրեր, որտեղ հանդիպում է այդ տերմինը: 1667 թ. կազմված կալվածագրում կարդում ենք. «Ես՝ Ամիրսուջի դուստր Աղանան էս և ես՝ դարբինդ Գրիգորի որդի Անդրիասս՝ Աղանանի փեսա, ծախեցի իմ կամաւ... իմ մայրենիք ընծաւափակի արաւ... սուրբ Նախավկայի առաջնորդ Միքայէլ վարդապետին երեք թուման...»: «Ես՝ Արամի որդի Յակոբս... ծախեցի իմ մայրենիք քեռած ալգին... Սիամոնի որդի Մուրիլին Ե. թուման...» (1718 թ.): «Ես՝ Խուրումի դուստր Յեղիսէս, իմ մէրենիք դարի արաի կէսն... ծախեցի...» (անթվակիր)³ և այլն (այստեղ և այսուհետև ընդգծումները մերն են—Ս. Հ.):

Հայագետներից մայրենիքի գոյությունը Հայաստանում առաջինը մեկնել են Հայկազյան լեզվի բառագիրքը կազմողները՝ 1837 թ.: Այնտեղ «մայրենիք» բառին, ի թիվս այլ բացատրությունների, տրված է «զմայրենի ստացուածս» մեկնությունը: Ստ. Մալխասյանը իր բացատրական բառարանում «Մայրենիք»-ն

¹ Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 85: Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Մովսէսի Խորենացու Մատենագրութիւնք, ի Վենետիկ, 1865, էջ 207 և այլն: Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, թիֆլիս, 1910, էջ 294, 296, 315 և այլն: Ներսէս Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864: Վիմական տարեգիր, կազմեց՝ Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913: Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, իրավաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբ Վ. Բաստամեանցի, Վաղարշապատ, 1880: Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի), լոյս ընծայեց Ա. Ղլտէյան, էջմիածին, 1918: Կանոնագիրք Հայոց, աշխատասիր.՝ Վաղգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 480 և այլն:

² Н. А. Д о н ц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, стр. 457—461. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 108, 315—319: Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939, էջ 184—192 և այլն:

³ «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», պրակ առաջին, կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 29, 65, 76:

մեկնում է՝ «Մօրը պատկանող: Մայրենի տուն՝ ժառանգություն... Մայրենի f, գ. մորից ստացված ժառանգություն»:

Արդ, իրապես՝ Հայաստանում եղել է մայրենի անունով սեփականություն և երբ է այն ծագել՝ XVII դարում, ինչպես թվագրված են վավերագրերը, թե՛ ավելի վաղ: Կամ ինչո՞ւ մեր պատմիչների երկերում, Գոշի և Սմբատի դատաստանագրքերում, «Կանոնագիրք հայոցում» կամ ավելի վաղ շրջանի հուշարձանում, որը գիտական աշխարհին հայտնի է «Ասորական», «Ասորա-հռոմեական» դատաստանագիրք անունով, չի հանդիպում այդ տերմինը: Եվ, վերջապես, ի՞նչ է մայրենի f, գ. ինչպես է այն ծագել և ո՞րն է նրա իրավական բովանդակությունը:

Նախ անհրաժեշտ է նկատել, որ մայրենիքի գոյությունը հաստատված է մի շարք ժողովուրդների մոտ: Այսպես, ֆրանկները մորից զավակներին ժառանգաբար փոխանցվող հողային տիրույթը կոչում էին *allod maternus*⁴, Վրաց գիտնականները գտնում են, որ դեդուլի (დედული) անունով սեփականություն եղել է նաև Վրաստանում: Գ. Նադարեյշվիլին գրում է, որ արդեն վաղ ժամանակների Վրաստանում ամուսնական գույքը՝ ըստ առաջացման աղբյուրների, բաժանվում էր մամուլի (հայրենիք), դեդուլի (մայրենիք) և այլն: Հեղինակի կարծիքով, դեդուլին մայրենի անշարժ գույք էր, որպիսին կինը ստանում էր ամուսնանալիս և նրա մահից հետո փոխանցվում էր զավակներին⁵:

Վերը բերված վավերագրերից երևում է, որ Հայաստանում մայրենիքը եղել է անշարժ տիրույթ՝ վարելահող կամ այգի, որը մորից փոխանցվել է զավակներին՝ որդիներին կամ դուստրերին: Վերջիններս իրավունք ունեին իրենց կամքով տնօրինելու այդ ստացվածքը, կամ, այլ կերպ ասած՝ իրականացնելու սեփականատիրոջ գլխավոր իրավագործությունը: Եթե հիշյալ վավերագրերի հիման վրա մայրենիքը բնութագրելու լինենք, անկարելի է անտեսել նրա երկու գլխավոր հատկանիշները. 1) սեփականության իրավունքով կնոջը պատկանյալ տիրույթ, կնոջ գույքային իրավունքների նեցուկը հասարակության մեջ և ընտանիքում, 2) որդիներին և դուստրերին մորից փոխանցվող անշարժ տիրույթ:

Ինչպես տեսնում ենք, մայրենիքը գույքային իրավունք է և կապված է կնոջ անձի հետ: Կինը մայրենիքի կրողն է և այն իր զավակներին փոխանցողը: Եթե կինը չունենար գույքային իրավունքներ, այդ թվում՝ անշարժ տիրույթի նկատմամբ սեփականության իրավունք, չէր ծնվի մայրենիքը և նրա նկատմամբ զավակների սեփականության իրավունքը: Դժվար չէ նկատել, որ կնոջ գույքային իրավունքը ավելի լայն հասկացություն է, քան մայրենիքը: Մայրենիքն անշարժ տիրույթ է, մինչդեռ գույքային իրավունքների մեջ մտնում են կնոջ բոլոր կարգի գույքային իրավագործությունները, որոնց թվում շարժական և անշարժ ստացվածքի սեփականության և այլ իրավունքներ:

Երբ է ծագել կնոջ գույքային իրավունքն իր ծնողների և ամուսնու ընտանիքում: Պատմական այն հեռավոր շրջանում, երբ մասնավոր սեփականությունը, ըստ ամենայնի, զարգացած չէր, և տիրապետող էր նահապետական գեր-

⁴ М. В. Колганов, Собственность. Докапиталистические формации, М., 1962, стр. 332.

⁵ Տե՛ս Գ. Ն. Надарейшвили, Очерки по истории грузинского семейного права, автореферат докторской диссерт., Тб., 1967, էջ 30: Նույնի՝ յնչորդուկ լաւթաւ նա-բարտլիս իստորիոյան, տեղուկ, 1965, 52—72:

դաստանը, գույքային իրավունքների գերագույն տնօրենը գերդաստանի գլուխն էր: Հողատիրությունը տոհմական էր ու անօտարելի և հորից (պապից, նախահորից) ժառանգաբար փոխանցվում էր միայն որդիներին: Դուստրերը իրենց հոր (պապի) ժառանգության նկատմամբ գույքային իրավունքներ չունեին: Հարսնության գնացած կինը միայն զարդերի և անձնական օգտագործման իրերի նկատմամբ կարող էր ունենալ գույքային իրավունքներ: Գնմամբ ամուսնության պայմաններում ամուսնացող դուստրին բաժինք տալը, այն էլ՝ անշարժ տիրույթ, ընդունված չէր: Այսպիսի պայմաններում կինը իր հայրական տանը, առավելագույն ամուսնու ընտանիքում, անշարժ ստացվածքի նկատմամբ չէր կարող ունենալ գույքային իրավունքներ, իր սեփական անկյունը կամ փոքր ընտանիքը ամուսնու գերդաստանում՝ մեծ ընտանիքի գույքային մասսայից առանձնացված իր ունեցվածքով:

Մասնավոր սեփականության զարգացումը թուլացնում է գերդաստանի տնտեսական հիմքերը: Վարակի նման տարածվում էր գերդաստանից որդիների առանձնանալը և սեփական տնտեսություն հիմնելը: Զարգացման այս փուլում՝ ընդարձակվում են դուստրի գույքային իրավունքները հայրական ունեցվածքի նկատմամբ: Աստիճանաբար արմատավորվում է ամուսնացող աղջկան հայրական սեփականությունից բաժին կամ օժիտ առանձնացնելու հոր և նրա այլ մերձավոր հարազատների պարտականությունը: Կինը հայրական սեփականության նկատմամբ (նախապես՝ շարժական, ապա՝ անշարժ) ձեռք էր բերում գույքային իրավունքներ: Նա այդ գույքը ամուսնության կապակցությամբ փոխանցում էր իր ամուսնու ընտանիքը, նրա նկատմամբ պահպանելով սեփականության իրավունքը: Նախապես հորից, ապա նաև մորից ու մերձավոր ազգականներից՝ դուստրին փոխանցվող գույքի տեսակը (շարժական, անշարժ) և ծավալը պայմանավորված էր նրանց դասակարգային և տնտեսական դրությամբ: Մեզ հայտնի է, որ հայ թագավորները և նախարարները իրենց ամուսնացող դուստրերին կամ քույրերին տալիս էին նրանց դիրքին և հարստությանը վայել բաժինք:

Հայաստանում դուստրերին բաժինք առանձնացնելու ծնողի (եղբոր) պարտականությունը և առաջինների այդպիսին ստանալու իրավունքը, հավանաբար, սկսել է զարգանալ դեռևս մ.թ.ա. I հազարամյակում: Մեզ թվում է, որ, կնոջ գույքային իրավունքներն ընդարձակելը՝ մասնավորապես ամուսնու անսանձ կամայականության դեմ ուղղված հակամիջոց էր, նպատակ ուներ ընդարձակելու կնոջ իրավունքները ամուսնու ընտանիքում և վերջին հաշվով նպաստելու ընտանիքի հիմքերն ամրապնդելուն: Խորենացու մի հաղորդումից անուղղակիորեն ստացվում է, որ դեռևս մ. թ. ա. I դ. կանայք սեփականության իրավունք են ունեցել հայրական անշարժ տիրույթի նկատմամբ: Այսպես, Խորենացին նշում է, որ Տիգրան Բ-ի որդի Արտավազդը «ժառանգեցուցան է զեղբարս իւր և զԳՈՐԱ ի գաւարս Աղիովտի և Առբերանոյ, քողով ի նոսա զմասն արքունի որ ի շէնս այնմ գաւարաց...»⁶:

Վաղ ավատական Հայաստանում գործող կարգի համաձայն, ամուսնացած կնոջ մերձավոր հարազատները (հայրը, պապը) արու զավակ չունենալու դեպքում իրավունք ունեին իրենց շարժական և անշարժ տիրույթը փոխանցելու ոչ միայն իրենց դուստրերին, այլև սրանց երեխային: Այսպես, Խորենացին գրում է, որ Գնեղը տիրույթներ էր ստացել Շահապիվանում, «որ ի մայրենի հաւաք

6 Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 95—96:

իւրոյ Գնէլոյ Գնունոյ հասեալ էր ցնա՞: Մեր ենթադրութեան ճշտութիւնը հաստատուում է նաև Փարպեցու մի հաղորդմամբ: «Եւ վասն զի ոչ գոյր իւր (Սահակ կաթողիկոսը—Ս. Հ.) արու որդի, բայց միայն դուստր մի, զոր էր տուեալ կնութեան Համադասպայ տեառն Մամիկոնեից և Հայոց սպարապետի, որ ծնաւ ի Համադասպայ երիս արու որդիս... ուրոց ետ և կնքեաց սուրբ այրն Աստուծոյ Սահակ զստացուածս դեօղից իւրոց և ագարակաց»⁷:

Այսպիսով, ծնողներից և այլ մերձավորներից ստացած բաժինքը, իսկ հետագայում դրան ավելացած՝ ժառանգմամբ ծնողներից դուստրին փոխանցված զանազան նյութական արժեքները դարձան կնոջ գույքային իրավունքների նյութական հիմքն ամուսնու ընտանիքում: Կինը սեփականատեր դարձավ օժիտի, ժառանգման, նվիրատվութեան և այլ եղանակներով իրեն փոխանցված գույքի նկատմամբ: Այս պայմաններում ընտանիքի ողջ գույքային մասսան երկատվելու էր ամուսիններից յուրաքանչյուրին պատկանող սեփականութիւնների, և ծագելու էր ամուսինների բաժան գույքային իրավունքը: Ծնողներից կամ նախնիներից (պապից և այլն) որդուն փոխանցված պապենիքը կամ հայրենիքը, գանձագին ունեցվածքը և այլն դարձան ամուսնու սեփականութեան իրավունքի առաջացման աղբյուր և այդ սեփականութեան առարկա, իսկ կինը սեփականատեր ճանաչվեց իր բաժինքի, նվիրատվութեան, ժառանգութեամբ փոխանցված և նրանցից ստացված եկամուտների կեսի նկատմամբ: Կանոնական իրավունքի նյութերը վկայում են, որ վաղ ավատական Հայաստանում ամուսինների գույքային հարաբերութիւններում տիրապետող էր բաժան գույքային իրավունքը: Այդ նշանակում է, որ կինը սեփականատեր էր տարբեր իրավական միջոցներով ձեռք բերած շարժական և անշարժ ունեցվածքի նկատմամբ: Այսպես, Շահապիվանի ժողովի Ե կանոնից երևում է, որ ամուսնացող կինը ամուսնու տուն տանում էր զանազան նյութական արժեքներ. «Ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ աղախին թէ անասուն, եթէ հանդերձ եթէ արծաթ՝ առնուլ իշխեսցէ եւ դնալ: Եւ եթէ քան զամուսինն այլ արատ չգուցէ ի [կինն] մարդն տուգան եւ տացէ կնոջն, վասն անարգանացն, թէ ազատ է՝ ՌՄ դրամ, եւ եթէ շինական՝ Ուժ»:

Առավել հետաքրքիրն այն է, որ կինը անշարժ տիրույթի սեփականատեր կարող էր դառնալ ամուսնու նկատմամբ գործադրվող ներգործութեան կանոնադրական միջոցների շնորհիվ: Այսպես, «Կանոնագիրք Հայոցի» նեոկեսարիայի կանոնախմբի ԺԲ կանոնի համաձայն, եթե ամուսինը «ոչ վասն պողոկոսեան եւ ոչ վասն շար գործոյ եթող զկին իւր... եթէ ոչ դարձցի առ բուն կինն իւր՝ զկեանս տանն իւրոյ բաժանեացէ, զկեսն կնոջն իւրում տացէ...»¹⁰: Մեկ դար հետո այս սկզբունքին միանգամայն համահունչ կանոն ընդունվեց նաև Շահապիվանի ժողովում: Վերջինիս Դ կանոնում կարդում ենք. «Եթէ ոք զկին թողցէ՝ զորդուց մայր՝ առանց բանի պողոկոսեան, եւ կամ թէ արատ ինչ շար ի մարմնի շիցէ, այլ որ եթէ այրն շնաբարոյ իցէ եւ այլում ակն եղեալ փցէ,

⁷ Նույն տեղում, էջ 209:

⁸ «Ղաղարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ թուրք առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մախասեան, Տփղիս, 1904, էջ 37:

⁹ «Կանոնագիրք Հայոց», աշխատասիր.՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 436—437:

¹⁰ Նույն տեղում, էջ 183—184:

դատաստան այս լիցի՝ զորդիս եւ զտուն եւ զկեանսն եւ զճողն եւ զջուրն եւ զամենայն ինչ բաժանեսցեն ճասարակաց, զկէսն կնոջն աացեն»¹¹:

Մի շարք հայագետների կարծիքով, վաղ ավատական Հայաստանում գործող «Աւրէնք յաղթող թագաւորացից...» («Ասորական» կոչվածից) պարզորոշ երևում է, որ մայրենիք սեփականության գոյության համար եղել են նաև աշխարհիկ-իրավական նախադրյալներ¹²: Ընդհանրապես նկատելի է, որ կանոնական իրավունքի իրավասությունից դուրս է եղել ամուսինների, ծնողների և զավակների գույքային իրավունքները կարգավորելը: Վերոհիշյալ կանոնները կանոնական իրավունքի համար բացառություն են: Այդ հարաբերությունները հավանաբար գլխավորապես կարգավորվել են աշխարհիկ-իրավական նորմերով, ըստ երևույթին՝ «Աւրէնք յաղթող թագաւորացից...»: Այս հուշարձանի համաձայն, կանանց շնորհված էր ծնողներից ժառանգելու իրավունք, նրանք բանաչված էին պռոցով (օժիտ), նվիրատվությամբ, գնմամբ ձեռք բերած (զանձագին) տիրույթի սեփականատեր, ընտանիքի շարժական ստացվածքի և անշարժ տիրույթի նկատմամբ օժտված էին բաժան սեփականության իրավունքով, այդ իրավունքի ինքնուրույն սուբյեկտ էին և իրենց կամքով տնօրինում էին այն:

Մայրենիքի հետ անմիջական կապ ունի Հուստինիանոս կայսեր (527—565)՝ «Հայոց ժառանգական իրավունքի մասին» էդիկտը և նույնի՝ «Հայոց ժառանգական իրավունքի մասին» 21-րդ նովելլան, որոնք ընդունվել են 535—536 թթ.: էդիկտում՝ գրված է. «Մենք ցանկանում ենք, որ... կանայք ևս իրավունք ունենան այսպես կոչված տոհմային կալվածքներից ժառանգություն ստանալու», իսկ 21-րդ նովելլայում կարդում ենք, որ «ծնողներին, եղբայրներին և մնացած ազգականներին ժառանգելու փրավունք ունենան ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք»¹³: Հիշյալ էդիկտից և նովելլայից աւամայից կարելի է եզրակացնել, որ Բյուզանդական Հայաստանի կանայք տոհմային կալվածքներ ժառանգելու իրավունքը ստացել են «բարերար» Հուստինիանոսի հոգատարության շնորհիվ: Այս եզրահանգումը ընդունելի է լուրջ վերապահություններ: Բանն այն է, որ դարաշրջանի իրավունքին հայտնի էր ժառանգման իրավունքի առաջացման երկու հիմք՝ օրենքի և կտակի համաձայն: Հայ պատմիչներից հայտնի է, որ կտակով ժառանգական սեփականություն տնօրինելը եղել է ծնողի իրավունքը: Նրանք իրավունք ունեին այդ սեփականությունը կամ նրա մի մասը կտակել դուստրերին կամ նրանց զավակներին, եթե չունեին արու զավակ, կամ երբ վերջինս անհնազանդ էր հորը, անարգում էր նրան և ունեցվածքը վատնում էր անբարոյական կանանց վրա (տե՛ս «Աւրէնք յաղթող թագաւորացից...»-ի հոդ. 6-րդը): Հուստինիանոսի նովելլան և էդիկտը ծնողների այս իրավունքը չեն սահմանափակում: Նրանք չեն շոշափում ծնողների կտակի իրավունքը: Դա բխում է նաև էդիկտից: Այնտեղ կարդում ենք. «Իսկ եթե գտնուվեն այնպիսիք, ովքեր հակառակ իրենց սովորության ժառանգական իրավունքի իրենց դուստրին արդեն գրանցել են ռալես ժառանգ, այդ դեպքում այդ կանայք և նրանցից ծնված երեխաները մասնակից թող դառնան տոհմա-

¹¹ Նույն տեղում, էջ 435—436:

¹² «Ասորական դատաստանագիրք», ձեռագրերի համեմատությամբ լոյս ընծայեց Արսէն Ղևոնեան, էջմիածին, 1917, հոդ. 61, 62, 64, 70, 71, 79, 80, 81, 143 և այլն:

¹³ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա. Պրոկոպիոս Կեսարացի, թարգմ. Բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 300—302:

յին կայքի ժառանգմանը: Ընդգծված բառերից երևում է, որ էդիկտի ընդունումից առաջ գտնվում էին ծնողներ, որոնք դուստրին գրանցում էին իբրև ժառանգ (հավանաբար՝ կտակով) և նրանք մասնակից էին դառնում տոհմային կայքի ժառանգմանը: Ուրեմն, Հուստինիանոսի էդիկտն ու նովելլան վերաբերում էին կանանց միայն օրենքի համաձայն ժառանգման իրավունքին: Նրանք իրավունք ստացան եղբայրների հետ ժառանգելու տոհմային կալվածքները, երբ ծնողները մահանալիս կտակ չէին թողնում: Դա, անշուշտ, կանանց գույքային իրավունքների ընդարձակում էր: Այն ստեղծում էր մի նոր իրավական երաշխիք մայրենիքի առաջացման համար, քանզի այդ շրջանում կինը կարող էր դառնալ անշարժ ստացվածքի սեփականատեր և այլ իրավական հիմքերով՝ բաժինք (պոռյգ) ստանալու, նվիրատվության, գնման և այլ եղանակներով:

Հուստինիանոսի էդիկտն ու նովելլան հետապնդել են ոչ թե հայ կանանց գույքային իրավունքներն ընդարձակելու նպատակ, այլ՝ Բյուզանդական Հայաստանի համար բախտորոշ նշանակություն ունեցող երկու քաղաքական դիտավորություն: Առաջինը, ինչպես նկատել են Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Խ. Սամվելյանը և այլք, այն էր, որ Հուստինիանոսը ոտնձգում էր երկրի անկախության համար մարտնչող գլխավոր ուժի՝ նախարարության տնտեսական հիմքերի՝ տոհմային կալվածատիրության դեմ: Հետադրողների տեսադաշտից վրիպած երկրորդ նպատակը այն էր, որ նա ձգտում էր վերացնել հպատակ հայերի՝ հայկական օրենքներով ղեկավարվելու ավանդույթը: Դա երևում է 21-րդ նովելլայի՝ «Հայաստանում գործող օրենքները ոչնչով չտարբերվեն հոմեոնացիների [օրենքներից]», «բոլորի վրա հավասարապես տարածվեն մեր օրենքները», «հայոց աշխարհում գործեն լավ օրենքներ» արտահայտություններից, որոնք նշանակում են, թե հայերը ներքին կյանքում, այդ թվում՝ ժառանգական հարաբերություններում, ղեկավարվել են ոչ թե բյուզանդական, այլ հայկական օրենքներով:

Մեզ հասած նյութերը վկայում են, որ կինը վաղ ավատական Հայաստանում ունեցել է զգալի գույքային իրավունքներ, թեև ոչ այնքան, որքան տղամարդը: Երկրի մարմնավոր տերերը իրենց դուստրերին և քույրերին տալիս էին հողային մեծ և փոքր տիրույթներ, գյուղեր, այգիներ, զանազան շինություններ, անասուններ, ծառա-աղախիներ, կահ-կարասի, թանկարժեք զարդեր, դրամ և այլ ունեցվածք, որոնք դառնում էին կանանց և նրանց ամուսինների տիրապետման և տնօրինման առարկա: Եվ քանի որ մայրենիքի գոյությունը պայմանավորված էր կնոջ գույքային իրավունքներով, կարող ենք եզրակացնել, որ վաղ ավատական Հայաստանում նյութական և իրավական նախադրյալներ են եղել մայրենիքի գոյության համար: Այս տեսակետից շահեկան նյութեր են պարունակում նաև Ստեփաննոս Օրբելյանի պատմությունը և, հատկապես, մի շարք վիժակալ արձանագրություններ:

Այսպես, Սյունյաց տեր Սմբատի տիկին Շահանդուխտը 998 թ. կազմում է հետևյալ ընծայագիրը. «Կամ եղև ինձ Շահանդխտոյ՝ դստեր Սևադայի, տալ ի Համբանդ գաւառի զանուանեալ շէնդ զՏեղ իւր ամենայն բոլոր սահմանովն, լերամբ և դաշտիւ և այլ մտիւք, զոր իմ քաղաւորին Սմբատայ ինձ տուեալ էր, և իմ ի կարգոյ շէնդ դրեալ... ետու ի ձեռն Տեառն Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի, և յայսմհետէ անիշխան եմք ես և իմ որդիքս Վասակ և Սևադայ...»: Վերջում ասված է. «Եւ վասն առաւել հաստատութեան գրեցի իմ ձեռոքս զայս»:

վճիռս ես վասակ՝ որդի Սմբատայ քազաւորի, հրամանաւ իմ մօրս»¹⁴: Հնդգծում-
ներից երևում է, որ նվիրատվութիւնը կատարվել է որդիներ ունեցող տիկնոջ
կամքով: Այդ կամքը պարտադիր է եղել որդիների համար և, որ առավել կարե-
վոր է, ընծայարեւորող շենը կնոջը սեփականության իրավունքով փոխանցվել
է ամուսնուց: Ուրեմն, նվիրատվութեամբ կամ ժառանգմամբ ամուսնուց ստա-
ցած անշարժ գույքը կնոջ համար եղել է սեփականության իրավունքի ժագման
աղբյուր:

Նույն պատմիչի վկայութեամբ՝ X դարի առաջին կեսին Սյունյաց մի այլ
տիկին՝ Սոփիան, մի շարք մեծարժեք նվիրատվութիւններ է կատարել եկեղե-
ցուն. «Բարեպաշտ տիկինն Սոփիա գնէ զգիւղն Հաւու... և տայ ի ժառանգու-
թիւն եկեղեցւոյն, և այլ ևս այգիս և ծաղկոցս յնշեգիս»¹⁵: Սոփիան գնում և
եկեղեցուն է նվիրում նաև Տամալեկսը՝ «ընդ գնոյ հազար դահեկանի... եւ հրա-
մայէ եպիսկոպոսին շինել ի նմա եկեղեցի և բնակեցուցանել անապատաւորս»¹⁶:
Օրբելյանը բերում է նույն Սոփիայի անունից կազմված մի վավերագիր ևս.
«Ես Սոփիա տիկին... շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգւոյ իմոյ և յարեշա-
տութիւն իշխանաց իշխանին Սմբատայ և որդեկաց մերոց, և զարդարեցի զսա-
մեծածախ սպասիւփ. և ետու զերկու գիւղս ի ժառանգութիւն սմա...»¹⁷:

Նույնպիսի մեծարժեք գործարքներ է կնքել Սյունյաց մի այլ անվանի տի-
կին՝ Մարիամը, 874 և այլ թվականներին: Սա Սեանա կղզում կառուցում է եր-
կու եկեղեցի: Այնուհետև՝ «զնեալ ի հազարացի մարդկանէ զգեօղն Շողուազայ
ընդ 60.000 դրամի», կառուցում է այնտեղ «զմեծապայծառ եկեղեցին... յանուն
սրբոյ առաքելոյն Պետրոսի», «նմանապէս և գեօղ մի փ Մազազ գաւառի ընդ
3.000 դահեկանի գնէ և տայ ի սուրբ եկեղեցին»¹⁸:

Ինչպես տեսնում ենք, այս տիկիները իրենց անունից կնքել են տար-
բեր բնույթի իրավական գործարքներ՝ առուծախի, շինարարական կապալի,
նվիրատվութեան և այլն: Նրանք գյուղերի նկատմամբ ձեռք են բերել սեփա-
կանության իրավունք, իսկ ապա նվիրատվութեան կամ կտակի միջոցով դրանք
փոխանցել են հոգևոր դասին: Հայ կանանց շրջանում առանձնապես տարած-
ված էր անշարժ տիրույթը կտակի միջոցով օտարելը: Կտակը կազմվել է կնոջ
կամքով, և ոչ ոք, այդ թվում որդիները, իրավունք չունեին վիճարկելու այդ
գործարքի օրինականութիւնը, թեև նրանք զրկվում էին այդ սեփականութիւնը
ժառանգելու իրավունքից: Այսպես, IX դ. վերջերին կազմված մի վավերագրի
մասին Օրբելյանը վկայում է. «շնորհէ և մեծ բարեպաշտուհի տիկինն Սիւնեաց
զՄածարդ և զՔարատնիս: Եւ գրեմ այսմ ամենայնի կտակ առաջի մեծ ժողովոյն
և կաթողիկոսին... և կնքեն զթուղթն վարազագիր մատանեալ թագաւորին և
կաթողիկոսին և իշխանացն»¹⁹: Մեծ տիկնաց օրինակին հետևում էին Սյունյաց
այլ իշխանների կանայք: Շարժեալ և կին մի բարեպաշտօն Համասպրուհի
անուն՝ դուստր Բարգենի իշխանի, տայ նախ զայգին մեծ որ ի Հալիսից գե-

14 «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան», Թիֆլիս, 1910,
էջ 291—293:

15 Նույն տեղում, էջ 259—260:

16 Նույն տեղում, էջ 271:

17 Նույն տեղում, էջ 261—262:

18 Նույն տեղում, էջ 174:

19 Նույն տեղում, էջ 229:

տառին և յետոյ՝ զգիւղն փսկ զՀալիս իւր ամենայն սահմանօքն. և զրէ կտակ հաստատութեան մեծամեծ գաշամբ զի մի՝ իշխեսցեն խախտել»²⁰:

Անշարժ տիրույթի նկատմամբ հայ կանանց սեփականութեան իրավունքի գոյութիւնը վաղ ավատական շրջանում համաստում են նաև Թովմա Արծրունու պատմութեան շարունակողը և Արիստակես Հաստիվերտցին: Առաջինը նշում է, որ «...զսա (պարոն Սեֆեդին— Ս. Հ.) յոյժ սիրեաց խեզենեկ Արքայուն իբրև յիւրմէ ծնեալ որդի, և ետ զդուստր իւր սորա ի կնութիւն և յօրինաւոր ամուսնութիւն և եւ սոքա վարձ և բաժին գկէսն Աղթամարայ»²¹, Հաստիվերտցին էլ վկայում է, որ Ախնի և Կամարա քույրերը «ի հայրենի ժառանգութենէ ունէին գիւղս երկուս»²²: Այդ նշանակում է, որ ծնողները, մասնավորապես հայրը, հողային և այլ անշարժ տիրույթ էին հատկացնում իրենց դուստրերին՝ սեփականութեան իրավունքով:

Բերված նյութերը համոզում են, որ կինը Հայաստանում եղել է սեփականութեան իրավունքի ինքնուրույն սուբյեկտ: Նա ոչ միայն տիրապետել է, օգտագործել, այլև զանազան իրավական եղանակներով տնօրինել է իրեն պատկանյալ անշարժ և շարժական սեփականութիւնը: Այսպիսի գույքային իրավունակութեան և ընտանիքում ամուսինների բաժան գույքային իրավունքների տիրապետման պայմաններում հայրենիքի գոյութիւնը դառնում է անխուսափելի:

Նույնը կարելի է հետևեցնել նաև բազմաթիվ վիճական արձանագրութիւններին և կալվածագրերին, որոնք հարուստ նյութեր են տրամադրում կնոջ գույքային իրավունքների ծավալի մասին: Այսպես, 1680 թ. կազմված մի կալվածագրում կարգում ենք. «Մեք... Մարգարի աղչկերքս, ես՝ Համասփիւս և ես՝ Հուսիկս, որ մեր հայրենիք ռասաթ բերինք՝ ընձանափակի արտն մեղ փայ և բաժին ընկաւ. յետոյ մեք՝ երկու քույրքս մեր կաման... ծախեցինք այս վերոյ դրեալ արտս... հինգ թուման...»²³: Մի այլ կալվածագրի համաձայն Ֆլորենց Մովսեսի կին Բեկին 1693 թ. նախավկայի վանքին է նվիրում՝ «իմ սալաղուն (իսայ) արտն», թեև այդ ընծայագրին երևում է, որ Բեկին ունի որդիներ, դուստրեր, թոռներ և ծոռներ²⁴: Այս և այլ կալվածագրերից երևում է, որ առուծախի, նվիրատվութեան, կտակի, վարձակալութեան և այլ գործարքների առարկա են եղել նաև այգիներ, ջրաղաց, խանութներ, ջուրը, տնատիրութիւնը և այլ անշարժ ու շարժական սեփականութիւնը: Կինը կրում էր գույքային պատասխանատվութիւն իր ամուսնու պարտքերի համար՝ նրա ողջ ունեցվածքով, զավակների հետ ժառանգում էր ամուսնու սեփականութիւնը, իսկ զավակների մահվան դեպքում՝ դառնում էր ամուսնու ունեցվածքի սեփականատերը, տնօրինում էր նրա ունեցվածքը: Իրենց սեփականութիւնը տնօրինող տղամարդիկ և կանայք զրավոր փաստաթղթերում նշում էին, որ մերձավոր հարազատներից ոչ ոք իրավունք չունի վիճարկելու կայացվող գործարքի օրինականութիւնը:

Հայտնի է, որ մեր նախնիները եկեղեցու օգտին կառուցում էին տաճար-

²⁰ Նույն տեղում, էջ 229—230:

²¹ Թովմայի վարդապետի Արծրունու պատմութիւն տառն Արծրունեաց ի յոյս էած Փ. Պ., Ս. Պետերբուրգ, 1887, էջ 321:

²² Պատմութիւն Արիստակիսի Հաստիվերտցու, աշխատասիր.՝ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 125—126:

²³ «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», պրակ առաջին, էջ 30:

²⁴ Նույն տեղում, էջ 38—39:

ներ, վանքեր, ժամատուն, մատուռ. հոգևորականների համար՝ բնակելի և այլ շինություններ, զարդարում էին եկեղեցիներն ու վանքերը թանկարժեք սպասքներով ու զարդերով, նվիրում էին նրանց գյուղեր, այգիներ, խանութներ և այլ անշարժ ունեցվածք: Փոխարենը հոգևորականները պարտավորվում էին պատարագներով հավերժացնել բարերարների հիշատակը՝ այս ամենը դրոշմելով եկեղեցու և այլ շինությունների պատերին: Դրանք տիպիկ իրավական գործարքներ էին՝ կողմերի փոխադարձ իրավունքների ու պարտականությունների արձանագրմամբ: Այսպիսի գործարքների կնքմանը լայնորեն մասնակցել են կանայք: Կանանց մասնակցությունը արտահայտվել է չորս եղանակներով, որոնք, ըստ երևույթին, պայմանավորված էին տնօրինվող գույքի նկատմամբ կնոջ իրավունքների ծավալով: Որոշ դեպքերում, թեև արձանագրությունների մեջ հիշատակված են կանանց անունները, բայց ըստ էության նրանք չեն մասնակցել գործարքը կնքելուն: Այն կնքվել է բացառապես ամուսնու անունից և, հավանաբար, նրա միջոցների հաշվին: Օրինակ՝ VII դ. մի արձանագրության մեջ կարդում ենք. «Ես Ներսես ապոհիպատ պա...ական և Աշարունեաց տէր շինեցի զեկեղեցիս յանուն սրբ(ո)յ Աստուածածնին ի բարեխառութիւն ինձ և Ծուլանայ ամուսնայ իմոյ, և Հատայ որդւոյ մերոյ»²⁵, Մի շարք դեպքերում, թեև եկեղեցուն փոխանցվում էր ամուսնու հայրենիք կամ գանձագին անշարժ տիրույթը, այնուհանդերձ կինը մասնակցում էր իբրև գործարքի պասիվ սուբյեկտ: Այսպես, X դ. մի արձանագրության մեջ գրված է. «Ես Տիթվասան, որդի Աբասայ արքայի, և ամուսինն իմ Ռուսուդան գնեցի իմ հայր ընչիւմ Ուբանի որդեացէն Անագէթն, Մամխուտն, Բագէնքն, Բերդկայ այգին... և Ծորթուանց տունն և Աւէտն իւրեանց հայրենիքն գանձագին աւառի, և ետաւ իմ սուրբ նշանիս ընծայ...»²⁶, XIII դ. կազմված մի արձանագրություն հավաստում է. «Ես Գաբեգայն էրէց որդի մանգիկ իրիցու և ամուսին իմ Մաբեաւ միաբանեցանք ի սբ ածածինս և ետաւ զիմ գանձագին գեղն...»²⁷:

Մի շարք արձանագրություններում ամուսինները ոչ միայն հանդես են գալիս իբրև գործարքի հավասարազոր սուբյեկտներ, այլև, որ առավել հետաքրքիր է՝ տնօրինվող ստացվածքը ներկայացվում է որպես նրանց ընդհանուր սեփականություն: Այսպես, VII դ. երկու արձանագրություններում կարդում ենք. «Ես Գրիգոր Եղուստր և Մարիամ իմ կին շինեցաք զսուրբ եկեղեցիս վասն մեր հոգաց»: Երկրորդը հավաստում է, որ «...հիմնադրեցաւ սուրբ Կաթողիկէս ի ձեռն Գրիգորի Մամիկոնենի Հայոց իշխանի և Հեղինէի նորին զուգակցի...»²⁸:

Ամուսինների ընդհանուր սեփականության գաղափարը շատ ավելի որոշակի է արտահայտված մի շարք այլ արձանագրություններում: Այսպես, Անիի արձանագրություններից մեկում կարդում ենք. «Յամի: Ուր... Ես Տրդատ քահանա որդի Սոսթէնէս քահանաի թոռն Գէորգա աւագերիցո Արճոյ և զուգակից իմ Խուշուշ աղախին Քրիստոսի... շինեցաք վերըստին զմեր գանձագին հայրենիքս զսբ Փրկիչս շատ աշխատութեամբ... շինեցաք սմա ժամատունս ամառանո և ձմերանո... Ես Տրդատ երէց և լծակից իմ Խուշուշս ի մեր հայրենի ժառանգութեանց ի սպաս պիտոից հացի և գինւոյ տաւաք շորս այգի յԱրուճ

²⁵ «Վիմական տարեգիր», էջ 2:

²⁶ Նույն տեղում, էջ 11:

²⁷ Ն. Մարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 187:

²⁸ «Վիմական տարեգիր», էջ 1—2:

ղՍաղար եւ զՇլիկն եւ զկովարածն եւ բլար խաշկայն եւ տուն եկեղեցւոյն ղի-
մաց. մեծ արա Բեխենցն ճ կապճո մին ի միքեսն ի ջրողսն բեխենցն այս է ի
Պղպղիկ: Աբդ ընդ այսր աշխատութեան եւ պարգեւի պարտին ժառանգորդը
զկնի մեր կատարել ամենայն ամի: Խ... (պատարագ)»²⁹: Նույն միտքն ար-
տահայտված է 1231 թ. կազմված երկու այլ արձանագրություններում: Ահա
նրանք. «ՈՁ... Ես ասլանս որդի Շերանկանն եւ զիզակից իմ ասուջիս տուաք
զմեր՝ գանձագին հայրենիքն գգողեցն զկէս դանգն իւր հողովն եւ ջրովն ի սբ
Յովհաննէս յառաջնորդութեանս...»: Կամ՝ «Ի սոյն ամի ես Խոսրով որդի Վար-
հրմա լաւոցո եւ զիզակից իմ Շուշիկ տուաք զմեր գանձագին հայրենիքն
զֆարհապին դանկն իւր հողովն եւ ջրովն ի սբ Յովհաննէս...»³⁰:

Բերված արձանագրություններից երևում է, որ կնոջ և տղամարդու մի-
ջոցներով անշարժ տիրույթ ձեռք բերելը եղել է ամուսինների ընդհանուր սե-
փականության առաջացման աղբյուր: Դրանով պետք է բացատրել այն փաստը,
որ անշարժ տիրույթը տնօրինելիս գործարքը կնքվել է ամուսինների անունից,
որոնք հանդես են եկել իբրև համասեփականատերեր և գործարքի լիարժեք
սուբյեկտներ: Պատահական չէ, որ դրանք որակված են իբրև «մեր գան-
ձագին հայրենիք» կամ «մեր գանձագին տուն» և, հավանաբար, ձեռք են բերվել
ամուսինների միացյալ դրամական կամ այլ միջոցներով:

Ամուսինների ընդհանուր սեփականության իրավունքի համար գոյություն
ունի նաև իրավական պատվանդան: Այսպես, Գոշի (Նկեղ. օր. հ. 85) և Սմբա-
տի (Հոդ. 119) դատաստանագրքերը վկայում են, որ գույքը ամուսիններին կա-
յող էր պատկանել նաև ընդհանուր սեփականության իրավունքով: Սմբատի
ժոտ ասված է. «Եթէ այրն ու կինն ի մէկ լինի, եւ խառնած լինի իրենց ամէն
ստացուածքն անբաժինք ընդ իրար, նա կարէ այրն տիաթիկ անել, եւ ի խառն
միջեմէն զիր հոգին հոգալ: Ապա թէ բաժնած լինի, եւ կնկանն ճանչած ի յետ,
նա իր ժառանգաւոր յետմնացածն լինի՝ զոր դնէ...» (Հոդ. 119): Այս քաղ-
վածքից երևում է, որ ամուսիններին պատկանյալ անշարժ տիրույթը կարող
էր խառնված լինել, յուրաքանչյուրի բաժինը՝ անորոշ: Այդպիսի սեփականու-
թյունը նրանց կարող էր պատկանել ընդհանուր սեփականության իրավունքով:
Մյուս կողմից՝ այդ սեփականությունը կարող էր «բաժնած» լինել և «կնկանն
ճանչած ի յետ» և նման դեպքերում զավակները մոր ստացվածքը կարող
էին ժառանգել առանձին, հավանաբար՝ իբրև մայրենիք: Կարծում ենք, որ դա-
րաշրջանին հայտնի է եղել ամուսինների ընդհանուր սեփականության իրա-
վունքի առաջացման և այլ եղանակներ:

Բազմաթիվ վիժական արձանագրությունները հավաստում են նաև, որ կինը
տնօրինել է ոչ միայն իր օժիտը, ժառանգման և նվիրատվության կարգով իր
հորից, պապից (հոր և մոր գծով), եղբայրներից ստացած հայրենիքը, այլև իր
մորից, հավանաբար, նաև մոր գծով տատից ստացած մայրենիքը, ինչպես
նաև գանձագին անշարժ տիրույթը: Այսպես, 854 թ. արձանագրության մեջ
ասված է. «Ես տիկնաց տիկին, ամուսին Արշուկին, միարանցայ Ս. Մարիա-
նէիս եւ Ետու զՓարապանց այգւոյն կէսն ի յգ. ուրպէս զնեցի եւ տվի...»³¹: Ար-
ձանագրություններում հաճախ հանդիպում են կանանց անունից ձևակերպ-

²⁹ Գրիվան հայ վիճագրության, պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 47:

³⁰ Նույն տեղում, էջ 147:

³¹ «Վիժական տարեգիր», էջ 31:

ված՝ «եստու իմ գանձով գնած», «եստու զիմ հայրենի բաժինը գեղն», «եստու զիմ տներն», «եստու զիմ զհայրենի կէս ական ձիթահանքն, որ ի յիմ ի ծնողացն ի պսակ ներքեւ ինձ բաժինը էր հասնալ...», «եստու երկու կուղպակ յիմ կուղպականոյն», «եստու զիմ գանձագին հայրենիքն», ինչպես նաև՝ «շինեցի զեկեղեցիս», «շինեցի տուն աստուծոյ» արտահայտութիւնները:

Երբ կանայք իրենց անշարժ ստացվածքը սեփականության իրավունքով փոխանցում էին եկեղեցուն, ամուսնուն, եղբայրներին, քույրերին կամ նրանց զավակներին, նրանք մայրենիք կոչվել չէին կարող: Կասկածից վեր է, որ կանայք իրենց ոչ բոլոր անշարժ սեփականութիւնն էին նվիրում և կտակում եկեղեցուն: Կանանց անշարժ տիրութիւն մի զգալի մասը սեփականության իրավունքով փոխանցվում էր նրանց զավակներին: Եվ հենց այստեղ է, որ մայրենիքի առաջացման համար պայմաններ են ստեղծվում և զավակները դառնում են մայրենիք սեփականության իրավունքի կրողներ:

Այժմ տեսնենք, թե ինչպես է լուծված մայրենիքի խնդիրը Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում: Մեզ չի տարակուսում «մայրենիք» տերմինի բացակայութիւնը այդ դատաստանագրքերում: Չի կարելի գերազնահատել տերմինի գոյութիւնը նշանակութիւնը, քանզի դրանով թերագնահատվում են մայրենիքը ծնող իրավական նախադրյալները: Մայրենիքի առկայութիւնը ապացուցելու համար շատ ավելի կարևոր և վճռորոշ նշանակութիւն ունի այն, թե ինչպե՞ս են նրանք վերաբերվել անշարժ տիրութիւնը նրկատմամբ կանանց սեփականության իրավունքին և ունեցե՞լ են արդյոք ամուսինները բաժան սեփականության իրավունք ընտանիքի գույքի նկատմամբ: Առանց կանանց այդպիսի իրավունքների մայրենիքը ծագել չի կարող:

Անկասկած կարելի է ասել, որ Գոշի և Սմբատի դատաստանագրքերը ամուսնացած և չամուսնացած դուստրերին իրավունք էին տալիս ժառանգելու իրենց ծնողների ամեն կարգի սեփականութիւնը: Չամուսնացած դուստրը ժառանգում էր ծնողների ողջ ունեցվածքը, եթե վերջիններս որդի չեն ունեցել: Նրանք չամուսնացած աղջկա ժառանգական իրավունքները ծնողների սեփականության նկատմամբ հավասարեցնում էին որդու ժառանգական բաժնի իրավունքին, իսկ երկու ամուսնացած դուստրերը իրավունք ունեն ստանալու մեկ որդու ժառանգական բաժինը: Այդ դատաստանագրքերի համաձայն մոր մահվան դեպքում մայրական ողջ շարժական և անշարժ սեփականութիւնը, վերոհիշյալ հիմունքներով փոխանցվում էր զավակներին: Հարցի այսպիսի լուծումը բխում է ընտանիքի գույքի նկատմամբ ամուսինների բաժան սեփականության իրավունքից: Նույն իրավունքից կամ սկզբունքից է բխում բաժինքի կամ պոռյգի նկատմամբ կնոջ իրավունքը: Որոշակի հիմքերով կատարված ամուսնալուծութիւն դեպքերում, ամուսինը պարտավոր էր վերադարձնել կնոջ բաժինքը կամ պոռյգը, այդ թվում՝ անասունները և նրանց աճի կեսը: Ավելին, Գոշի դատաստանագիրքը վերաբարտադրում է Շահապիվանի ժողովի Դ կանոնի պահանջը, ըստ որի ամուսինը պարտավոր էր իր կնոջը հանձնելու իր ողջ գույքի՝ տան, հողի, ջրի և այլ ունեցվածքի կեսը, եթե ատելութիւն հողի վրա բաժանվում էր իր երեխաների մորից: Գոշի և Սմբատի դատաստանագրքերը չեն սահմանափակում կնոջ քաղաքացիական գործունակութիւնը տան, հողի և այլ անշարժ և շարժական սեփականության նկատմամբ, այդ թվում առուծախի և այլ եղանակներով օտարելու իրավունքը (տե՛ս Գոշի եկեղ. օր-

հոդ. 5, 7, 8, 57, 93, 94: Աշխ. օր. հոդ. 1, 62, 63, 64, 65, 98, 108: Սմբատի դատաս. հոդ. 1, 78, 82, 118, 119, 145 և այլն):

Այսպիսով, վերոհիշյալ բոլոր աղբյուրները հավաստում են, որ ավատական Հայաստանում նյութական և իրավական նախադրյալներ են եղել մայրենիք սեփականության և նույնանուն սեփականության իրավունքի գոյության համար: Բոլոր աղբյուրների հաղորդումները կազմում են մեկ միասնական շղթա և միանգամայն հարազատ են միմյանց:

Ի՞նչ է ցույց տալիս մայրենիքի իրավական վերլուծությունը: Ամենից առաջ՝ այն սեփականության իրավունք էր, իրավական նորմերի համակցություն, որի ուժով կինը սեփականության իրավունք ուներ անշարժ տիրույթի նկատմամբ: Այդպիսի սեփականության նկատմամբ կնոջ սեփականության իրավունքի առաջացման աղբյուրները եղել են բազմազան: Այն կարող էր դուստրին, թոռնուհուն, քրոջը փոխանցվել՝ հորից, պապից, մորից և եղբորից: Հորից և պապից անշարժ տիրույթը սովորաբար փոխանցվում էր բաժինք (օժիտ)՝ պոռյգի ձևով, օրենքի համաձայն ժառանգման, նվիրատվության և կտակի միջոցով: Նույն իրավական հիմքերով կնոջը կարող են սեփականության իրավունքներ փոխանցվել ամուսնուց և զավակներից: Մայրենիքի առաջացման գործնական աղբյուր էր անշարժ տիրույթ գնելու կնոջ իրավունքը կամ գանձագին սեփականությունը և այլն: Երբ անշարժ տիրույթը հորից, պապից և եղբորից փոխանցվում էր դուստրին, թոռնուհուն, քրոջը, վերջիններիս համար այն կոչվում էր հայրենիք: Այդպես շարունակվում էր մինչև այդ սեփականությունը իր զավակներին փոխանցելու պահը: Այստեղ արդեն հայրենիքը կնոջ զավակներին փոխանցվում էր մայրենիքի փոխակերպված: Երբ անշարժ տիրույթը մորից էր փոխանցվում զավակներին՝ այն նրանց համար կոչվում էր մայրենիք: Եթե մոր ժառանգությունը փոխանցվում էր դուստրին, նրանից էլ՝ իր դուստրին կամ առաջինին թոռնուհուն, մայրենիքի գոյությունը հարատևում էր մի քանի սերունդ: Իսկ եթե մայրենիքը փոխանցվում էր որդուն, նրանից էլ իր զավակներին, ապա այստեղ տեղի էր ունենում հակառակ երևույթը, ասինքն՝ մայրենիքը փոխակերպվում էր հայրենիքի, դադարում էր մայրենիքի գոյությունը: Այսպիսով, մայրենիքը՝ հայրենիքի փոխակերպվելը և առաջինի դադարումը և, ընդհակառակը՝ հայրենիքը մայրենիքի վերածվելը մշտական պրոցես էր ողջ ավատական Հայաստանում:

Սակայն այստեղ նկատվում է սովորութական իրավունքի և սովորույթի վրա խարսխված մի կարևոր երևույթ, որ էպպես սահմանափակում էր մայրենիքի գործնական նշանակությունը հայրենիքի համեմատությամբ: Բանն այն է, որ սովորույթի համաձայն հայրական ծուխը վառ ու շեն պահելու, անշարժ տիրույթը շտարալուծելու նպատակով, հաճախ եղբայրներ ունեցող դուստրին որպես բաժինք, նվերներ և ժառանգություն առանձնացվել է ոչ թե անշարժ տիրույթ, այլ շարժական գույք՝ գրամ, կահ-կարասի, անասուններ, թանկարժեք զարդեր և այլն: Այդ բանը երևում է Շահապիվանի ժողովի Ե կանոնից, ուր կնոջ օժիտը ներկայացված է իբրև շարժական սեփականության ամբողջություն: Այսպիսի պայմաններում թեև կինը շարունակում էր մնալ մայրենիք սեփականության իրավունքի պոստենցիալ կրող, բայց քանի որ նա չի ստանում անշարժ տիրույթը, այդպիսին փր անունից չէր կարող փոխանցել իր զավակներին: Այստեղից էլ՝ մայրենիքի սահմանափակ տարածումը և նվազ գործնական նշանակությունը:

Մալրենիքի առաջացման համար գործնական նշանակություն ունեւր անշարժ տիրույթը՝ իբրև գանձագին սեփականություն ձեռք բերելու կնոջ իրավունքը: Կինը իր գրամի, զարգերի և ալլնի հաշվին կարող էր գնել անշարժ տիրույթ: Նա ալլպես էլ վարվում էր: Այդ են վկայում հողվածում բերված վիմական արձանագրությունները: Բայց այստեղ ևս մալրենիքի առաջացումը բախվում էր լուրջ խոչընդոտների: Բանն այն է, որ ընտանիքի գույքի նկատմամբ ամուսնուն վերապահված էին գերապատիվ իրավունքներ՝ կնոջ հանդեպ: Ամուսինը օգտագործում, տիրապետում և տնօրինում էր ընտանիքի շարժական սեփականությունը՝ ելնելով ընտանիքի շահերից, կամ՝ ամուսինների շարժական սեփականության հաշվին միացյալ միջոցներով ձեռք էին բերում որևէ անշարժ տիրույթ, որը դառնում էր ամուսինների ընդհանուր սեփականությունը: Հասկանալի է, որ այդ սեփականությունը զավակներին իբրև մալրենիք փոխանցվել չէր կարող:

Այսպիսով, եթե հալրենիքի առաջացման համար գործնականում ոչ մի սահմանափակում գոյություն չունեւր, ապա մալրենիքի ծագման հիմքերը սահմանափակվում էին հասարակության մեջ իշխող սեփականության հարաբերությունների, կնոջ սոցիալ-իրավական դրության և տվյալ դարաշրջանում իշխող իրավական պատկերացումների ուժով:

Մալրենիք սեփականության իրավունքի գոյությունը ավատական Հայաստանում նշանավոր փաստ է կնոջ քաղաքացիական գործունակության ծավալը, նրա գույքային-իրավական և անձնական դրությունը հասարակության մեջ և ընտանիքում բնութագրելու համար: Այդ սեփականության գոյության շնորհիվ կարելի է անվարան պնդել, որ հետազոտվող դարաշրջանում ազատների դասակարգի կանանց անձնական և գույքային իրավունքները եղել են բավականին ընդարձակ, թեև նրանց իրավունքները, այնուամենայնիվ, սահմանափակված էին մասնավոր սեփականության տիրապետման պայմաններում:

ПРАВО СОБСТВЕННОСТИ МАЙРЕНИК В ФЕОДАЛЬНОЙ АРМЕНИИ

С. А. ОГАНЕСЯН

Р е з ю м е

В феодальной Армении майреником было названо право женщины на недвижимую собственность, подобно *allod maternus* у франков, *дедули*—у грузин. На основе богатого и разнообразного фактического правового материала—сообщений армянских историков, эпиграфических надписей, купчих и различных хозяйственных сделок, заключенных в XV—XVIII вв., судебных Мхитара Гоша и Смбата Спарапета, канонического права Армении—делается вывод, что для существования собственности и права собственности майреник во всей феодальной Армении имелись материальные предпосылки. Основными признаками майреника являются: а) недвижимость, принадлежащая женщине на правах собственности, б) право собственности, переходящее от матери к детям (сыновьям и дочерям). Существование майреника имеет большое значение для научного осмысления имущественно-правового положения женщины в обществе и в семье феодальной Армении.